

Տէր Աբրահամի մասին դժբախտարար ասկէ աւելի տեղեկութիւն չունինք. շատ հաւանական է որ ան թողած է գրչական այլ գործեր, որոնք կամ կորսուած են և կամ մեզի անձանօթ մնացած: Տէր Աստուածատուր քհնյ. Ուրֆացիի գրել ու ծաղկել տուած մեր թիւ 51 Աւետարանին երկրորդ յիշատակագրութեան մէջ, էջ 527, կայ իր մահուան արձանագրութիւնը, շատ խնամով, այսպէս « թվին ՌՃԲ (1653) վաղձանեցաւ Աբրահամ Էրէցն և եղին յիշատակ զսբ. աւետարանս ի զուռն քառասունը եկեղեցոյ, ի հայրապետութեան Տեան Ներսէսի կաթողիկոսին, և ի առաջնորդութիւն Խաչատուր վարդապետին Սերաստացոյն, ոչ ոք ունի իշխանութիւն հանելոյ զսա ի զրանէ սուրբ եկեղեցոյ »:

Դժբախտարար, հակառակ մեր պըրպտուսներուն չյաջողեցանք գտնելու իր դամբարանը, ոչ Ս. Բառասնից եկեղեցոյ ներսն ու զուրսը, ոչ ալ Ազիզիէի Ազգ. Գերեզմանատան մէջ, այլպէս ան արժանի էր իրեն ժամանակակից քահանայից նման իր դամբարանն ունենալու, քանի որ որոշապէս կը յիշատակուի թէ ան վախձանեցաւ Հալէպի մէջ, ուր սակայն թողոց զարգացած և խոհական քահանայի բարի անուն մը:

22. Տէր Աբրահամ այլ քանակայ. Հրաւիրացի. — Վերոգրեալ Տէր Յովհաննէս քհնյի. որդի Տէր Աբրահամի ժամանակակից է այլ Տէր Ա.Բ.Ս.Ղ.Ս.Մ մը, որուն ծննդեան թուականն ու ծննդավայրը զըժբախտարար յայտնի չեն: Տէր Աբրահամ

մէկ անգամ միայն կը յիշուի Հալէպի մէջ, իբր գրիչ և ծաղկող քահանայ, անկասկած ուսած Հալէպի Դասատան մէջ և հասուցած աշակերտներ, որոնցմէ կը յիշատակուի միայն ՊԱԿԻՃՍՆ՝ իբր իր հոգեւոր որդին և աշակերտը:

Տէր Աբրահամ քահանայի մեզի ծանօթ միակ գրչութիւնն է 1657ին Հալէպի մէջ գրած թղթեայ ՇԱՐԱԿՆՈՅ մը. որ այժմ կը մնայ Վիեննայի Միթրաբեանց Մատենադարանը, 358 թիւի տակ (Տես Տաշեան Յուցակ, ըջ 810): Չեռագիրս ունի 391 թերթ. մեծութիւնն է 15¹/₂ × 5 սանտիմ, միասին 21 տողոց էջերով, մաքուր նոտրագիր և բաւական յաջող ծաղկուսներով: Ունի խորան մը մանուշակի կարմիրով և ինը կիսախորան: Պահուած է բաւական լաւ վիճակով: Յայտնի չէ թէ ինչ պարագաներու տակ այս Չեռագիրը Հալէպէն դուրս ելած է և անցած Իզմիր և 1891ին ուրիշ ձեռագրերու հետ գնուած և Վիեննա ղրկուած է:

Շարականը գրուած է Տէր Աբրահամի հոգեւոր որդի և աշակերտ Պարկիճանի խնդրանքով և ասոր նիւթական օժանդակութեամբ, իբր յիշատակ հօրը Մուրատին, մօրը Հաւասին և մեծ. հօրը Աստուածատուրին և Մարթա կողակցուն, եղբորը Յովհաննէսին և մայրական մեծ ծնողացը մհի Շահրիարին և մհի Զմրուութին:

Դամբարանին չենք հանդիպած ոչ մէկ տեղ: Կրնայ ըլլալ որ այլուր վախձանած ըլլայ:

Հալէպ ԱՐՏԱՆԱԶԻ ԱՐԲԵՊՍ.

ՔՈՒՉԱԿԵԱՆ ԵՐԵՔ ՆՈՐ ՏԱՂԱՇԱՐՔԵՐ

Վերջերս սիրելի բարեկամս Արտաւազը Արքեպոս. Սիւրմէեան՝ Հալէպի հայոց առաջնորդը, հրատարակեց գնահատելի աշխատութիւն մը «Յուցակ Հայերէն ձեռագրաց Հալէպի», որուն մէջ ուշադրութիւնս գրաւեց թիւ 121 տաղարանը: Յարգելի ցուցակագիրը անոր մասին կ'ըսէ. «Գրիչ՝ խիզանցի Տէր Սարգիս քհնյ. — Ստացող՝ ինքը գրիչը. — Ժամանակ՝ ՌՃՂԲ = 1743. — Տեղի անյայտ. հաւանաբար Հալէպ. — Ծաղկող՝ անձանօթ »:

Արտաւազը Արքեպոս կ'աւելցընէ. «Տաղարանս յիշատակարան չունի. քանի մը համառօտ անուն ու թուականներ ունի սակայն, զորս իբր յիշատակագրութիւն կը զնեմ հոս »:

«Ս. էջ 88. — Ի մեղք գոողես, ի Սարգիս Հիզակցոյ »:

«Բ. էջ 177. — Թվին ՌՃՂԲ (1743) Յուզիսի Ժե. օրև, լորեկըրք. ցրեցաւ գիւրըս »: Իսկ յաջորդը 1781էն ուրիշ յիշատակութիւն մը որ հոս մեզ չի հետաքրքրեր:

Արդարեւ որոշ է որ գաղափարողը Սարգիս Հիզակցին է. սակայն չեմ կարծեր որ 1743ը Չեռագրին թուականը, այլ յետին ժամանակներու գրչի մը յիշատակութիւնն է. որով Չեռագիրը գրուած ըլլալու է 1743էն շատ առաջ. և ասիկա կ'ապաստուցուի անով որ նոյն այս ցուցակին մէջ թիւ 10 Աւետարանին յիշատակարանը թիւ 10 Աւետարանին «Եւս առաւել տէր Սարգիս վարպետին Հիզակցոյ՝ այսմ արուեստի ուսուցողի» մասին: Այսինքն Սարգիս վարպետ հիզակցի (խիզակցի) եղած է ուսուցիչը 1596ին գրուած այս աւետարանին գրիչ Վահանին որ նոյն ատեն կը վկայէ որ ինքն ալ իր կարգին ունի աշակերտներ, ուրեմն Սարգիս խիզակցի կ'ըլկերտներ, ուրեմն Սարգիս խիզակցի կ'ըլայ 1596էն առաջ ժՉ դարու գրիչ — ուսուցիչ մը և որոշ է որ իր գրչէն ելած

Հալէպի թիւ 121 Չեռագիր Տաղարանը գրուած չի կրնար ըլլալ 1743ին, այլ աւելի ժՉ դարուն:

Արդ այս ժՉ դարեան տաղարանին մէջ կան ֆուչակեան երեք տարբեր տաղարաններ:

Սոաջինը «Տաղ ի վերայ խերաց և խուստոքեան սասցեայ», էջ 55-56:

Երկրորդը «Տաղ ի վերայ խերաց որ է սիրուն», էջ 57էն սկսեալ բայց պակասաւոր՝ թերթի մը կամ թերթերու մը անկման պատճառով:

Երրորդը «Նորին յոհանու քան ի քոյն և աշխարհարոյս վարդապետի սասցեայ», էջ 49էն սկսեալ մինչեւ էջ 53:

Չեմ գիտեր թէ ասոնք Չեռագրին բուն գրչէն են թէ վերջին դարու գրչի մը կողմէն աւելցուած հոն, վասն զի Յուցակաւորը Չեռագրին գրութեան համար կը գրէ. «Մէկէ աւելի տեսակէ է, զանազան գրիչներ հոն նոր տաղեր աւելցուցած ըլլալով: Բուն գիրը մանր նոտրագիր է »:

Արքեպոս ցուցակագիրը, որ այնքան ազնուութեամբ օրինակած էր և ինծի ղըրկած այս տաղերը, իր օրինակութեան մէջ ալ բան մը չ'ըսեր անոնց գրին բուն գրչին ըլլալու մասին: Եթէ այս տաղերը բուն գրչէն օրինակուած են, այն ատեն ֆուչակեան Տաղաշարքերու հնագոյն օրինակ մը ունեցած կ'ըլլանք Հալէպեան այս Չեռագրին մէջ:

Այժմ անցնինք տաղերուն զորս այստեղ կ'արտագրեմ ինձ ղրկուած օրինակին համաձայն, լուսանցքին տակ տալով հարկ եղած ծանօթութիւնները: Այն քառեակները որոնց մասին ծանօթութիւն չէ տըրուած, կրնայ ըլլալ որ բողոքովին անտիպ ըլլան, քառեակներուն ոչ շարքը և ոչ ուղղագրութիւնը փոփոխուած է, այլ եղածին պէս հրատարակուած, միայն սղագրութիւնները պարզուած են:

Ա.

Տաղ ի վերայ խերաց և խմատուրեան տուացեալ

Մէկ մարդ մի ճուհար ունէր ի խելաց պահել չի կարաց. երբ խելքն ի վերան եկաւ, չուք գնաց ճուհարն ի ձեռաց, Գընաց ինքն ի վայր նըստաւ, ողբմով և շատ մի ելաց. Զէտ էլաց այլ ինչ անեմ, երբ զընաց ճուհարն ի ձեռաց¹:

Աշխարհս ի վաճառ եկի, ի շահուն տեղն զենեցայ. Շիշա մի հալած ոսկի էի, ի գետին ի վայր թափեցայ. Ասի թէ բարեւ մի տամ, այն կըռոցն որ մարդ չիմանայ, Արին զթագն ի գլխոյս, այն պահուն որ ես չիմացայ²:

Աշխարհն է ի ծով նըման, ով որ գայ անթաց չի մընայ. Այս ծովս ես ի նաւ նըստայ, նաւըս զընաց որ ես չիմացայ, Յեզեր մօտեցեալ է նաւ, կու վախեմ քարի դիպենայ, Բակվի իմ աղվոր շինվածս ու տախտակըն մէկ մէկանայ³:

Յաշխարհս ի վաճառ եկի թէ շահիմ ես զանձ հոգեղէն. Զար աւագակաց դիպայ, թալնեցին զինչ մերկ ի մօրէն:

Բանիկ մի դալատ արի, որ զօճուն ձագըն սիրեցի, Խիստ վըստահութիւն արի որ օճուն դուռն զընացի, Օճուն մայրն ի դուրս եկաւ, զիս խայթեաց ես նըստա լացի, Արժան եմ ես այն նենգիս, օճուն ով եղեւ սիրելի.

Ինձ Երեմիաս պիտէր, ողբերգօղն ի յիսրայիլէն. Որ բազում ողբով կոծէր, զըմբըռնեալն ի շար վիշապէս:

Բ. տաղաշարքը հետաքրքրական է ոչ թէ անտիպ ըլլան համար, այլ որովհետեւ, բաց ի մէկ տունէ մը, յար և նըման է 1792ին կ. Պոլիս հրատարակուած «Պղնձէ քաղաք» ի հրատարակութեան, որ ունի «Բանք պիտակիք և օգտակարք՝ ասացեալ յառաջնոց» (էջ 220): Այս հնագոյն Գուշակեան տպագրութեան մասին արդէն գրած եմ և Տաղաշարքն ալ հրատարակած

«ՎԷՄ» ի մէջ. (Փարիզ, 1934. Մարտ-Ապրիլ, էջ 41):

Արդ որոշ է որ թիւ 121 Հալէպի ձեռագիրը 1792ի հրատարակութիւնէն շատ աւելի հին է, թէեւ տպագրին պէս ոչ ամբողջական: Ուստի իբր հնագոյն օրինակ հոս կը հրատարակեմ զայն: Զեռագիրն ունի տպագրէն տարբեր խորագիր. այսպէս.

1. Այս տաղը հրատարակուած է իմ կողմէս. տես «Գուշակեան Տաղաշարքերու հնագոյն տպագրութիւններ». - ՎԷՄ երկամսեայ. Փարիզ. 1934. Մարտ-Ապրիլ, էջ 44. Գառնակի թիւ Բ. կը ներկայացընեն տարբերակներ: 2. Այս քառերկուս բաց ի մէկ տողէ մը՝ նման է Պ. Ա. Զօպանեանի «Նահապետ Գուշակի Գիւանի» խրատական թիւ ԺԲ. տաղին: 3. Այս ալ հրատարակուած է իմ կողմէս «Բագմավէպ» ի մէջ «Գուշակեան նոր տաղաշարք մը» 1932 թիւ 10-11. քառերկուս թիւ ԼԷ. Երկուքն ալ նման իրարու՝ շատ քիչ տարբերութեամբ:

Բ.

Տաղ ի վերայ խերաց որ չի սիրուն

Աւաղ մեզ հայել պիտի, այն արեւն որ լոյս կու ծագէ, Շատ կայ ի յարեւ նման, ի պըղճին վերա կու վազէ, Գիտուն մարդն արեւ նըման, խօսքըն զէտ արեւ կու ծագէ, Անգէտ մարդն օճու նըման հանապազ գմարդըն խոցէ:

Մարդ կայ որ հազար ածէ, հազար կայ որ մէկ մի չաժէ, Այն մարդն որ հազար ածէ, անգիտին քով փող մի չաժէ, Բազան ի յանտառ մորին, թէ բու թէպէտ բազայէ. Ճօհարն ի ծովին միջին, թէպէտ քար թէպէտ ճօհար է:

Խելօքն յանգիտին ի մօտ, միտք արա թէ ինչ նման է. Ճըրագն ի յառջեւ կուրին, կու վառի և ինքըն չի գիտէ. Խելօքն է ի ծով նըման որ քանի չափեն նա տանի, Տգէտն է ի տիկ նըման, չափ մի աւել ընտուն կու պատուի¹:

Մանկտիք երբ ի հաց նըստիք, ձենեցէք աղքատք ձեզ ընկեր. Մեռնիք վի անդէն երթայք, կու նըստիք քանց մէկ այլ ի վեր, Մարդն որ օտար տեղ երթայ, շատ մի խելք նորա պիտենա. Ամէն մարդու ցած կենայ. ապա իր բանն լինենայ:

Շատ թագաւորաց մեծաց, իմաստնոց արանց լըտեցի, Թէ անչափ չկըշտանայ մարդն, աստընվորէս մինչ որ մեռանի. Տանին գերեզման դընեն, և հողով իւր աչքըն լըցւի, Ապա փոշիմանի և ասէ, թէ հերիք է այլ չի պիտի:

Այս օր հետ ես ինձ արի, չէ արեր Ալամայ որդին, Որ շիշայ մի հալած ոսկի, ի գետինն ի վայր վաթեցի, Հազար ձի վագան բերի, վագոցի այլ ոչ հասուցի, Ինչ շահիմ ես յետին խելաց, երբ առջի անուն աւերի:

Մէկ մարդ մի ճօհար ունէր. ի խելաց...

Մնացեալը կը պակսի: 1792ի տպագրութեան մէջ կան զեռ 4 տուներ որոնք կ'ենրեւի թէ ձեռագրիս ինկած թերթերուն հետ կորսուեր են:

Հալէպի Զեռագիր այս տաղարանին Գուշակեան Գ. շարքը յարեւ նման է Երուսաղէմի Ս. Յակոբեանց մատենադարանին թ. 2323 Զեռագրի Գուշակեան տաղաշարքին՝ զոր հրատարակեցի ամբողջութեամբ: Հալէպի տաղաշարքը սակայն կազմուած է Սաղիմեան տաղաշարքին սկիզբի ԺԳ. քառերկուսերէն, թէեւ կը պահէ նոյն շարքը: Սաղիմեան տաղաշարքը կը բաղկանայ 49

քառերկուսերէ, հրատարակեցի «Բագմավէպ» ի 1932 թիւ 10-11ին մէջ «Գուշակեան նոր տաղաշարք մը» խորագրով. որովհետեւ Զեռագիրը չունէր ոչ մէկ խորագիր: Իսկ Հալէպինը կը կրէ՝ «Նորին յոնակնու քակիոյն և աշխարհաշուս վարդապետի ասացեալ»: Թէ ո՞ր Յովհաննէս վարդապետին կը պատկանի այդ վերագրումը՝ յայտնի չէ: Սակայն, ըստ իս, խորագիրը հոս նշանակութիւն մը չի ներկայացընէր, վասն զի այսպիսի անտեղի վերագրումներ շատ կան մեր հին Զեռագիրներուն մէջ:

Յ. ՔԻՒՐՏՅԱՆ

1. Տպագրին մէջ կայ քառերկուս մը «Աշխարհս է տօլապ նըման...» որ այս Գ. քառերկուս վերջ կու գայ, որ սակայն ձեռագրիս մէջ կը պակսի: